ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության Ռազմարդյունաբերության կոմիտեի 2021 թ. կարիքների համար անվտանգության ապահովման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԲՏԱՆ-ԷԱՃԾՁԲ-2021/04» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «11» հոկտեմբերի 2021թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Ավետիք Սերոբյան՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ռազմարդյունաբերության կոմիտեի նախագահի օգնական

հանձնաժողովի անդամներ՝

Արտակ Բաղդասարյան՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ռազմարդյունաբերության կոմիտեի գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների կազմակերպման վարչության պետ

Բաբկեն Ոսկանյան՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ռազմարդյունաբերության կոմիտեի գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների կազմակերպման գլխավոր մասնագետ

հանձնաժողովի քարտուղար՝

Դիանա Գրիգորյան՝ Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գնումների բաժնի փորձագետ

1. Տեղեկություն՝ «ԲՏԱՆ-ԷԱՃԾՁԲ-2021/04» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

1.1 հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել ընթացակարգի հայտարարությունը և հրավերը eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) հրապարակվելու օրվանից հաշված 8-րդ օրվա (08.10.2021թ.) ժամը 10:00-ն,

1.2 հայտերը բացվել են էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով,

1.3 էլեկտրոնային հակադարձ աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 11.10.2021 թ., ժամը 10:00-ին:

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայության գնի վերաբերյալ.

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայության գինը՝ մեկ թվով արտահայտված.

Չափաբաժնի համարը	Գնվելիք ծառայության անվանումը	Գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայության գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ)
1	Անվտանգության ապահովման ծառայություններ	1 992 850

3. Էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով, հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը՝

N	Մասնակցի անվանումը (անունը)	Մասնակցի գործունեության հասցեն
1	***«ՍԻԳՄԱ-ՏԵԼ»***	Ք. Երևան, Մանթաշյան 26

4. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.

Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի համաձայն՝ մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը գնահատող հանձնաժողովի քարտուղարին հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ ստացված հարցումների և տրամադրված պատասխանների մասին.

Հայտերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել, հետևաբար պատասխաններ չեն տրամադրվել:

6.«ԲՏԱՆ-ԷԱՃԾՁԲ-2021/04» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը (անունը)	Նախնական առաջարկ /ՀՀ դրամ/			Վերջին առաջարկ /ՀՀ դրամ/			Մասնակցի կարգավիճակ
		Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1	***«ՍԻԳՄԱ-ՏԵԼ»***	1950000	0	1950000	**1950000**	**0**	**1950000**	

Էլեկտրոնային հակադարձ աճուրդը ավարտվել է՝ աճուրդն ամփոփվել է 11.10.2021թ.-ին, և Համակարգի կողմից առաջին տեղն զբաղեցրած մասնակից է համարվել «Սիգման-Տել» ՍՊԸ-ն

7. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի /դիմում-հայտարարության Հավելված 1 և իրական շահառուների մասին հայտարարագիր Հավելված 1.3/ առկայության մասին.

«ՍԻԳՄԱ-ՏԵԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է հրավերով պահանջվող փաստաթղթերը **/դիմում-հայտարարության Հավելված 1 և իրական շահառուների մասին հայտարարագիր Հավելված 1.3/**

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

8. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

8.1 ***«ՍԻԳՄԱ-ՏԵԼ»*** ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա պահանջվող փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում են բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

9. Տվյալներ՝ ընտրված մասնակցի վերաբերյալ.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը ***որոշեց «ՍԻԳՄԱ-ՏԵԼ» ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից,***

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

10. Հանձնաժողովը որոշեց գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակցի հետ կնքել համապատասխան պայմանագիր:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի քարտուղարին.

Հանձնաժողովի՝

Նախագահ՝

_____ Ավետիք Սերոբյան

Անդամներ՝

_____ Արտակ Բաղդասարյան

_____ Բաբկեն Ոսկանյան

Քարտուղար՝

_____ Դիանա Գրիգորյան